

ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռումինիայի կառավարությունը,

ղեկավարվելով երկու Պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակույթային հարաբերությունները զարգացնելու և ամրապնդելու մտադրությամբ, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու, հարկումից խուսափումը կանխելու և հարկային խտրականություն թույլ չտալու նպատակով որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Անձինք, ում նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը

Սույն Համաձայնագիրը կկիրառվի Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Հարկեր, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը

1. Սույն Համաձայնագիրը տարածվում է յուրաքանչյուր Պայմանավորվող պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների կողմից եկամուտներից և գույքից գանձվող հարկերի վրա՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից և գույքից գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր արժեքից կամ եկամուտների և գույքի առանձին տարրերից, այդ թվում շարժական կամ անշարժ գույքի օտարման արդյունքում հավելաձից գանձվող, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի ընդհանուր գումարից գանձվող, ինչպես նաև գույքի արժեքաձից բոլոր տեսակի հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը տարածվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի վրա.

ա) Հայաստանի դեպքում՝

i) շահութահարկ,

- ii) ֆիզիկական անձանցից եկամտահարկ,
- iii) գույքահարկ,
- iv) հողի հարկ,

(այսուհետ՝ հայկական հարկ):

բ) Ռումինիայի դեպքում՝

- i) ֆիզիկական անձանց ստացած եկամտահարկ,
- ii) շահույթից հարկ,
- iii) աշխատավարձից և այլ նման վճարումներից հարկ,
- iv) գյուղատնտեսական եկամուտներից հարկ,
- v) շահաբաժիններից հարկ,
- vi) շինություններից հարկ և շինություններով և կառույցներով

զբաղեցված հողի հարկ,

(այսուհետ՝ ռումինական հարկ):

4. Սույն Համաձայնագիրը պետք է կիրառվի նաև ցանկացած նույնական կամ նմանատիպ այլ հարկերի նկատմամբ, որոնք գանձվելու են ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն՝ սույն Համաձայնագրի ստորագրումից հետո: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ժամանակին կժանուցեն միմյանց իրենց հարկային օրենսդրությունում կատարված որևէ նշանակալի փոփոխության մասին:

Հոդված 3

Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան չի բխում ենթատեքստից.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» արտահայտությունները ենթատեքստից կախված նշանակում են Հայաստան կամ Ռումինիա,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և, երբ օտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է տարածք, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը, միջազգային իրավունքի և ներքին օրենսդրության համաձայն, իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն,

գ) «Ռումինիա» տերմինը նշանակում է Ռումինիա և, երբ օտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է Ռումինիայի տարածքը, ներառյալ նրա ծովային տարածքը, ինչպես նաև հատուկ տնտեսական գոտին, որտեղ Ռումինիան իրականացնում է գերազույն իշխանություն, ինքնիշխան իրավունքներ և իրավասություն, իր ներքին օրենքի և միջազգային իրավունքի համաձայն, ծովային ջրերում գտնվող, ծովափի և այդ ջրերի հատակի հողային շերտերի բնական,

կենսաբանական և հանքային պաշարների հետազոտության և շահագործման վերաբերյալ,

դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է որևէ կորպորատիվ միավորում կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակների համար դիտարկվում է որպես կորպորատիվ կազմավորում,

զ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» արտահայտությունները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող կամ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) «միջազգային փոխադրում» արտահայտությունը նշանակում է Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից ծովային, գետային կամ օդային նավով, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ, երբ այդպիսի փոխադրումն իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող կետերի միջև,

ը) «իրավասու մարմին» արտահայտությունը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ հարկային տեսչությունը կամ նրա լիազորած ներկայացուցիչը,

ii) Ռումինիայի դեպքում՝ ֆինանսների նախարարությունը կամ նրա լիազորած ներկայացուցիչը,

թ) «ազգային անձ» արտահայտությունը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, անձանց միավորում և Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա իր կարգավիճակը որպես այդպիսին ստացած որևէ այլ միավոր:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագիրը կիրառվելիս սույն Համաձայնագրով ընդգրկվող հարկերի առնչությամբ դրանում չսահմանված ցանկացած տերմին կամ արտահայտություն կունենա այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ Պետության օրենսդրությամբ, եթե այլ բան ենթատեքստից չի բխում:

Հոդված 4 Ռեզիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» արտահայտությունը նշանակում է ցանկացած անձ, որն այդ Պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկման, մշտական բնակության վայրի, գրանցման վայրի, ղեկավարման վայրի, պաշտոնական բնակավայրի կամ այլ նման չափանիշի հիման վրա:

2. Եթե, սույն հոդվածի առաջին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձը Պայմանավորվող երկու պետություններում էլ ռեզիդենտ է, ապա նրա կարգավիճակը կորոշվի հետևյալ կարգով.

ա) նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի իրեն պատկանող մշտական կացարան. եթե նա Պայմանավորվող երկու պետություններում էլ ունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որի հետ ունի առավել սերտ անձնական և տնտեսական կապեր (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի ընթացիկ կացարան,

գ) եթե նա երկու Պետությունում էլ ունի ընթացիկ կացարան կամ ոչ մեկում էլ այդպիսի կացարան չունի, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է,

դ) եթե նա Պայմանավորվող երկու պետություններում էլ քաղաքացի է կամ ոչ մեկում էլ քաղաքացի չէ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կլուծեն այդ հարցը փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ առաջին կետի դրույթների համաձայն՝ ֆիզիկական չհանդիսացող անձը Պայմանավորվող երկու պետությունների ռեզիդենտ է, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի օրենսդրության համաձայն ստեղծվել է:

Հոդված 5

Մշտական հաստատություն

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն» արտահայտությունը նշանակում է գործունեության կայուն վայր, որի միջոցով Պայմանավորվող պետության ձեռնարկությունը իր գործունեությունը, ամբողջությամբ կամ մասամբ, իրականացնում է մյուս Պայմանավորվող պետությունում:

2. «Մշտական հաստատություն» արտահայտությունը, մասնավորապես, ներառում է.

ա) ղեկավարման վայր,

բ) բաժանմունք,

գ) գրասենյակ,

դ) գործարան,

ե) արհեստանոց,

զ) եկամուտ ստանալու նպատակով ապրանքների մատակարարման համար օգտագործվող պահեստ, և

է) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների հետախուզման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. «Մշտական հաստատություն» արտահայտությունը ներառում է նաև.

ա) շինարարական հրապարակը, շինարարական, հավաքման կամ տեղակայման օբյեկտը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը, բայց միայն երբ այդպիսի հրապարակի, օբյեկտի կամ գործունեության տևողությունը գերազանցում է 9 ամիսը որևէ 12-ամսյա ժամանակահատվածում,

բ) Պայմանավորվող պետության ձեռնարկության ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ խորհրդատվական, իր կողմից այդ նպատակների համար վարձած ծառայողների կամ այլ անձնակազմի միջոցով մյուս Պայմանավորվող պետությունում, բայց երբ այդ կարգի գործունեությունը (մեկ կամ փոխկապակցված օբյեկտների համար) գերազանցում է 9-ամսյա ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները ցանկացած 12 ամսյա ժամկետում:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ կհամարվի, որ «մշտական հաստատություն» արտահայտությունը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահպանման, ցուցադրման կամ առաքելու նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարի պահումը բացառապես պահպանման, ցուցադրման կամ առաքելու նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարի պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակվելու նպատակների համար,

դ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի վաճառքը՝ ցուցադրված ոչ պարբերական ժամանակավոր տոնավաճառի շրջանակներում կամ ցուցահանդեսում, եթե ապրանքները կամ արտադրանքը վաճառվել են տոնավաճառի կամ ցուցահանդեսի փակումից հետո ոչ ավելի, քան մեկ ամսվա ընթացքում,

ե) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակներով,

զ) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

է) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես «ա»-ից «զ» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի ընդհանուր

գործունեությունը պետք է կրի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած առաջին և երկրորդ կետերի դրույթներին, եթե ձեռնարկության անունից գործող անձը անկախ կարգավիճակով գործակալ չէ, (որի մասին խոսվում է 6-րդ կետում) ունի և սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից կոնտրակտներ կնքելու իրավասություն, ապա համարվում է, որ այդ ձեռնարկությունն ունի մշտական հաստատություն այդ Պետությունում ցանկացած գործունեության առումով, որն այդ անձն իրականացնում է ձեռնարկության համար, բացառությամբ այդ անձի գործունեության՝ սահմանափակված 4-րդ կետում նշված տեսակներով, եթե այն իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, ապա այդ գործունեության կայուն վայրը չպետք է դիտարկվի որպես մշտական հաստատություն՝ համաձայն այդ կետի դրույթների:

6. Համարվում է, որ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը չունի մշտական հաստատություն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե նա ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում բրոքերի, կոմիսիոնների կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործեն իրենց ձեռնարկատիրական գործունեության սովորական շրջանակներում:

7. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ կհամարվի, որ Պայմանավորվող պետության ապահովագրական ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, եթե նա ընդունում է ապահովագրական մուծումներ այդ մյուս Պետության տարաքում կամ ապահովագրում է այնտեղ հնարավոր ռիսկից՝ 6-րդ կետում նշված անկախ գործակալի կարգավիճակ չունեցող անձի միջոցով (ասվածը կրկնակի ապահովագրման դեպքերին չի վերաբերում):

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը հսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ հսկվում է նրա կողմից, ինքնըստինքյան այդ ընկերություններից մեկին չի վերածում մյուսի մշտական հաստատության:

Հոդված 6

Եկամուտներ անշարժ գույքից

1. Եկամուտները, որոնք ստանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտը մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից (այդ թվում՝ եկամուտները գյուղացիական կամ անտառային տնտեսություններից), կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» արտահայտությունը կունենա այն նշանակությունը, որը նա ունի Պայմանավորվող այն պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է հիշատակված գույքը:

Արտահայտությունը ամեն դեպքում կներառի անշարժ գույքի օժանդակ գույքը, գյուղացիական կամ անտառային տնտեսություններում օգտագործվող անասունների զվխաքանակը և սարքավորումը, հողային գույքին վերաբերող ընդհանուր օրենքում կիրառվող իրավունքները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և փոփոխական կամ հաստատագրված վճարումների իրավունքները՝ հաշվի առնելով հանքաշերտերում, աղբյուրներում և այլ բնական պաշարներում աշխատելու համար կամ աշխատանքի իրավունքը. ծովային, գետային կամ օդային նավերը, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվի:

3. 1-ին կետի դրույթները կկիրառվեն անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տալուց կամ օգտագործման ցանկացած այլ ձևից ստացված եկամուտների նկատմամբ:

4. Եթե բաժնետոմսերի կամ ընկերության այլ կորպորատիվ իրավունքների տնօրինումը բաժնետոմսերի կամ ընկերության այլ կորպորատիվ իրավունքների տիրոջը տալիս է ընկերության անշարժ գույքը տնօրինելու իրավունք, ապա այդ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալման տալուց կամ այդպիսի տնօրինման իրավունքի ցանկացած այլ ձևի օգտագործումից առաջացած եկամուտները կարող են հարկվել Պայմանավորվող այն պետությունում, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

5. 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի դրույթները կկիրառվեն նաև ձեռնարկության անշարժ գույքից կամ անկախ անհատական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից առաջացած եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունից ստացած շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է վերը նշված ձևով, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն մասով, որ մասով այն վերագրվում է այդ մշտական հաստատությանը:

2. Ելնելով սույն հոդվածի երրորդ կետի դրույթներից, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական

գործունեությունն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանը կվերագրվի այն շահույթը, որը նա կարող էր ակնկալել ստանալ, եթե լիներ նույն կամ նման պայմաններում, նույնպիսի կամ նմանատիպ գործունեություն իրականացնող և միանգամայն ինքնուրույն գործող առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս կթույլատրվի գործունեության հետ կապված, փաստաթղթերով հաստատված մշտական հաստատության նպատակների համար կատարված ծախսերի հանում, ներառյալ դեկավարման և ընդհանուր վարչական ծախսերը, Պետություններից որևէ մեկում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, կամ այլ տեղ: Այս դրույթը կկիրառվի՝ հաշվի առնելով ներքին օրենսդրության սահմանափակումները:

4. Եթե, Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն, մշտական հաստատությանը վերաբերող շահույթի որոշումը կարող է կատարվել ձեռնարկության տարբեր ստորաբաժանումների միջև շահույթի ընդհանուր գումարի հավասար բաշխման հիման վրա, ապա սույն հոդվածի երկրորդ կետի դրույթները խոչընդոտ չեն հանդիսանա այդ Պայմանավորվող պետության համար՝ հաշվառել հարկվող շահույթը ընդունված բաշխման միջոցով: Սակայն բաշխման ընտրված ձևի արդյունքները պետք է լինեն սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին համապատասխան:

5. Մշտական հաստատությանը չի վերագրվում այն շահույթը, որն առաջացել է միայն ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնումից:

6. Նախորդ կետերի նպատակների համար մշտական հաստատությանը վերագրվող շահույթը կորոշվի ամեն տարի միևնույն եղանակով, բացառությամբ, եթե այն փոխելու համար կա պատշաճ ու բավարար պատճառ:

7. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնց մասին առանձնահատուկ նշվում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդի այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

Միջազգային փոխադրում

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը, ստացված ծովային, զետային կամ օդային նավերով, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցներով միջազգային փոխադրումից, հարկվում են միայն այդ Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը, ստացված բեռնարկերի և դրանց վերաբերող սարքավորումների ուղղակի օգտագործումից, վարձակալության տալուց կամ ցանկացած այլ ձևի շահագործումից, հարկվում է միայն այդ Պետությունում:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև այն շահույթի նկատմամբ, որոնք Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ստանում է համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում ունեցած մասնակցությունից, բայց միայն համատեղ գործունեությունում նրա ունեցած մասնաբաժնին վերագրվող մասով:

Հոդված 9

Ջուզորդված ձեռնարկություններ

1. Երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարման, վերահսկման կամ գույքի մեջ, կամ

բ) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են և Պայմանավորվող պետության ձեռնարկության, և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարման, վերահսկման կամ գույքի մեջ, և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային և ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր համարվել նրանցից մեկինը, բայց այդ պայմանների պատճառով չի համարվել, կարող է մտցվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ներառում է և համապատասխանաբար հարկում մի շահույթ, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում արդեն պարտավորվել է հարկվել, և այդ ձևով հաշվի առնված շահույթը համարվում է առաջին նշված Պետության ձեռնարկությանը հաշվառվող շահույթ. եթե երկու ձեռնարկությունների միջև լինեն անկախ ձեռնարկությունները բնորոշող փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կկատարի իր մոտ հաշվարկված նշված շահույթի հարկի համապատասխան ճշտում: Այդպիսի ճշտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող պետության իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10 Շահաբաժիններ

1. Շահաբաժինները, որոնք վճարում է Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, ում ռեզիդենտն է համարվում շահաբաժիններ վճարող ընկերությունը, այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, ապա պարտավորվող հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5%-ը, եթե փաստացի սեփականատեր համարվող ընկերությունը ուղղակի տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության գույքի առնվազն 25%-ը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 10%-ը՝ մնացած բոլոր դեպքերում:

Պայմանավորվող պետության իրավասու մարմինները այս սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

Այս կետը չի ազդի ընկերության շահույթի (որտեղից վճարվում են շահաբաժինները) հարկման վրա:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից, բաժնետոմսերի «օգտագործումից» կամ իրավունքների «օգտագործումից», հանքարդյունաբերության բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցության իրավունք տվող այլ իրավասությունից, ինչպես նաև այլ կորպորատիվ իրավունքներից, որոնք ենթակա են նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից եկամուտը, այն Պետության հարկային օրենսդրությանը համաձայն, որի ռեզիդենտն է հանդիսանում շահույթի բաշխումը իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, ում ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրոք վերաբերում է նման մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային: Այդ դեպքում, հանգամանքներից կախված,

կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ կամ 15-րդ հոդվածների դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ համարվող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, վերջինս կարող է չհարկել ընկերության վճարած շահաբաժինները, բացառությամբ, եթե այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրոք գործնականորեն կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ, և ընկերության չբաշխված շահույթից հարկեր չգանձել, եթե անգամ շահաբաժինները վճարվում են կամ չբաշխված շահույթը լիովին կամ մասամբ կազմված է այդ մյուս Պետությունում կազմավորվող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11 Տոկոսներ

1. Տոկոսները, որոնք առաջանում են Պայմանավորվող պետությունում և վճարվում են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման տոկոսները կարող են հարկվել նաև Պայմանավորվող այն պետությունում, որտեղ դրանք առաջանում են, այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը հանդիսանում է տոկոսների փաստացի սեփականատերը, ապա պարտավորվող հարկն այդ դեպքում չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10%-ը: Պայմանավորվող պետության իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում առաջացած տոկոսը կազատվի այդ Պետությունում հարկումից, եթե այն ստանում և փաստորեն տնօրինում է մյուս Պայմանավորվող պետության կառավարությունը, իշխանության տեղական մարմինը, վարչատարածքային ստորաբաժանումը կամ կառավարության, իշխանության տեղական մարմնի, վարչատարածքային ստորաբաժանման որևէ գործակալությունը, բանկային միավորումը կամ հաստատությունը, եթե մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի պարտապահանջները երաշխավորում, ապահովագրում, ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորում են մյուս Պայմանավորվող պետության կառավարությանը ամբողջովին պատկանող ֆինանսական հաստատությունները:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից,

անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից, փոխառության տոմսերից ու պարտատոմսերից, ներառյալ դրանց պարզևավձարներն ու շահումները՝ կցված այդպիսի արժեթղթերին, պարտատոմսերին և փոխառության տոմսերին: Սույն հոդվածի նպատակների համար ժամկետանց վճարումների համար պարտավորվող տույժերը որպես տոկոսներ չեն դիտվում:

5. Առաջին և երկրորդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջացել են այդ տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայից, և պարտապահանջը, որի հիման վրա տոկոսները վճարվում են, իրոք վերաբերում են նման մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ կամ 15-րդ հոդվածների դրույթները՝ կախված հանգամանքներից:

6. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը Պետությունն է, նրա վարչատարածքային ստորաբաժանումը, իշխանության տեղական մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է թե ոչ, մշտական հաստատություն կամ հաստատուն բազա ունի Պայմանավորվող պետությունում, որոնց գործունեության արդյունքում ստեղծվել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա համարվում է, որ այդ տոկոսները առաջանում են այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների հետևանքով պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն նշված վերջին գումարի նկատմամբ: Այս դեպքում վճարի ավելցուկային մասը առաջվա պես կմնա հարկվող Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

Կոմիսիոն վարձատրություն

1. Պայմանավորվող պետությունում առաջացած և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված կոմիսիոն վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի կոմիսիոն վարձատրությունը կարող է հարկվել նաև Պայմանավորվող այն պետությունում, որտեղ առաջանում է այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. միայն եթե ստացողը հանդիսանում է կոմիսիոն վարձատրության փաստացի սեփականատերը, այդ դեպքում պարտավորող հարկը չպետք է գերազանցի կոմիսիոն վարձատրության համախառն գումարի 15%-ը: Պայմանավորվող պետության իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Կոմիսիոն վարձատրություն» արտահայտությունը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է բրոքերին, գլխավոր միջնորդ գործակալին, բրոքերին կամ գործակալին նմանեցված որևէ այլ անձին կատարված վարձատրություն Պայմանավորվող պետության, որտեղ այդպիսի վճարումն առաջացել է, հարկային օրենսդրությամբ:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե կոմիսիոն վարձատրության փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է կոմիսիոն վարձատրությունը, մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում գտնվող հաստատուն բազայից, և իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է կոմիսիոն վարձատրությունը, իրոք կապված են այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ և 15-րդ հոդվածների դրույթները:

5. Համարվում է, որ կոմիսիոն վարձատրությունը առաջանում է Պայմանավորվող պետությունում, եթե վճարող են հանդիսանում ինքը՝ Պետությունը, նրա վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտը: Սակայն եթե կոմիսիոն վարձատրություն վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, այդ Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն կամ հաստատուն բազա ունի, որոնց գործունեության հետ կապված կոմիսիոն վարձատրություն վճարելու պարտավորություն է առաջացել, և վճարման ծախսերը կրում են այդ մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա համարվում է, որ այդ կոմիսիոն վարձատրությունը առաջացել է Պայմանավորվող այն պետությունում, որտեղ գտնվում են մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև կամ նրանց երկուսի և երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով կոմիսիոն վարձատրության գումարը գործունեության նկատմամբ, որի համար վճարվում է, գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և կոմիսիոն վարձատրության փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն նշված վերջին գումարի նկատմամբ: Այս դեպքում վճարի ավելցուկային մասն առաջվա պես կմնա հարկվող Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 13 Ռոյալթի

1. Պայմանավորվող պետությունում առաջացած և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև Պայմանավորվող այն պետությունում, որտեղ այն առաջանում է, այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը հանդիսանում է ռոյալթիի փաստացի սեփականատերը, ապա պարտավորվող հարկն այդ դեպքում չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 10%-ը: Պայմանավորվող պետության իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է ցանկացած տեսակի վճարումներ՝ ստացված գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի հեղինակային իրավունքներից, ներառյալ կինոնկարները, և արբանյակային, կաբելային, օպտիկական մանրաթելային կամ նման տեխնոլոգիաներով հասարակությանը հաղորդվող ռադիոհաղորդումների կամ հեռուստատեսային հաղորդումների համար ձայնագրությունները կամ կինոնկարները, ցանկացած պատենտից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներից օգտվելու կամ օգտագործելու համար իրավունքի տրամադրման կամ արդյունաբերական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկության դիմաց: «Ռոյալթի» տերմինը ներառում է նաև գույքի կամ իրավունքների դասավորությունը կամ արտադրության, արդյունավետության օգտագործումը, քանակություն կազմող որևէ այդպիսի գույքի կամ իրավունքների օտարումից դրանց արժեքի հավելաձև՝ այդպիսի հավելաձի չափով:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում ռոյալթիի աղբյուր հանդիսացող մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայից, և իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է ռոյալթին իրոք կապված են այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ և 15-րդ հոդվածների դրույթները:

5. Համարվում է, որ ռոյալթին առաջանում է Պայմանավորվող պետությունում, եթե վճարող են հանդիսանում ինքը՝ Պետությունը, նրա վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Եթե, սակայն, ռոյալթի վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է թե ոչ, Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն կամ հաստատուն բազա ունի, որոնց հետ կապված ռոյալթի վճարելու պարտավորություն է առաջացել, և վճարման ծախսերը կրում են այդ մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա համարվում է, որ այդ ռոյալթին առաջացել է Պայմանավորվող այն պետությունում, որտեղ գտնվում են մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև կամ նրանց երկուսի և երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով իրավունքը կամ տեղեկությունը, որի համար դրանք վճարվում են, օգտագործելու վերաբերյալ ունեցած ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն նշված վերջին գումարի նկատմամբ: Այս դեպքում վճարի ավելցուկային մասն առաջվա պես հարկվում է Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 14

Գույքի արժեքի հավելաձև

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի 6-րդ հոդվածում սահմանված, մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելաձև կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ անկախ ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած, հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից այդպիսի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում գործող ծովային, գետային նավերի կամ օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների, ինչպես նաև այդպիսի ծովային, գետային նավերի կամ օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ձեռնարկության ստացած արժեքի հավելաճը հարկվում է միայն այդ Պետությունում:

4. Ընկերության, որի գույքը, ուղղակի կամ անուղղակի, գլխավորապես կազմված է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշվածից բացի, ցանկացած գույքի օտարումից արժեքի հավելաճը հարկվում է միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է գույք օտարողը:

Հոդված 15

Անկախ անհատական ծառայություններ

1. Եկամուտը, որը ստանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտը մասնագիտական ծառայությունների մատուցումից կամ այլ, անկախ բնույթի գործունեությունից, հարկվում է միայն այդ Պայմանավորվող պետությունում, բացառությամբ, երբ նա իր գործունեությունն իրականացնելու համար մյուս Պայմանավորվող պետությունում ունի կանոնավոր օգտագործվող հաստատուն բազա: Եթե նա այդպիսի հաստատուն բազա ունի, ապա եկամուտը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այդ հաստատուն բազային վերագրվող մասով:

2. «Մասնագիտական ծառայություններ» արտահայտությունը ներառում է հատկապես անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների,

Ճարտարապետների, ատամնաբույժների, հաշվապահների անկախ գործունեությունը:

Հոդված 16

Կախյալ անհատական ծառայություններ

1. Հաշվի առնելով 17-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածների դրույթները՝ աշխատավարձը և նման այլ վարձատրումները, որոնք Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստանում է վարձու աշխատանքի դիմաց, հարկվում են միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում, ապա այդ կապակցությամբ ստացված վարձատրումը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած վարձատրությունը՝ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց, հարկվում է միայն հիշատակված առաջին Պետությունում՝ հետևյալ պայմանների միաժամանակ կատարման դեպքում.

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում տվյալ օրացուցային տարում սկսվող կամ ավարտվող ամբողջությամբ վերցրած ցանկացած 12-ամսվա ընթացքում 183 օր կազմող ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները չգերազանցող ժամկետում,

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող ձեռնարկատեր վարձողի կողմից կամ նրա անունից,

գ) վարձատրություն կատարելու ծախսերը չի կրում մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, որոնք մյուս Պետությունում ունի աշխատողը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության իրականացրած միջազգային փոխադրումներում գործող ծովային, օդային կամ գետային նավում, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցներում իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

Հոդված 17

Տնօրենների հոնորարներ

Տնօրենների հոնորարները և մյուս նմանատիպ վճարումները, որոնք ստանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտը որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 18 Արվեստի աշխատողներ և մարզիկներ

1. Անկախ 15-րդ և 16-րդ հոդվածների դրույթներից՝ եկամուտը, որը ստանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտը որպես արվեստի աշխատող՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի, հեռուստատեսության դերասան, որպես երաժիշտ կամ մարզիկ մյուս Պայմանավորվող պետությունում կատարվող իր անհատական, որպես այդպիսին, գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացվող անհատական գործունեությունից առաջացած եկամուտը հաշվարկվում է ոչ թե արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա, չնայած սույն Համաձայնագրի 7-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածների դրույթներին, այդ եկամուտը կարող է հարկվել այն Պետությունում, որտեղ այդ արվեստի աշխատողը կամ մարզիկը իրականացնում է գործունեությունը:

3. Չնայած առաջին և երկրորդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետությունների կառավարությունների միջև համաձայնեցված մշակութային և մարզական փոխանակման շրջանակներում առաջին կետում նշված գործունեությունից ստացած եկամուտը, եթե այն չի իրականացվում շահույթ ստանալու նպատակով, կազատվի հարկումից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այդ գործունեությունը իրականացվել է:

Հոդված 19 Կենսաթոշակներ

1. Համաձայն 20-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների՝ կենսաթոշակները և Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող այլ նմանատիպ վարձատրումները՝ կապված նախկին վարձու աշխատանքի հետ, կհարկվեն միայն այդ Պետությունում:

2. Չնայած սույն հոդվածի առաջին կետի դրույթներին՝ կենսաթոշակներն ու այլ նմանատիպ վճարումները՝ կատարված Պայմանավորվող պետության սոցիալական ապահովագրության օրենսդրության տակ, կհարկվեն միայն այդ Պետությունում:

Հոդված 20 Պետական ծառայություն

1. Պայմանավորվող պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից ոչ կենսաթոշակի ձևով վարձատրումը ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը,

նրա վարչատարածքային ստորաբաժանմանը կամ տեղական իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց, կհարկվի միայն այդ Պետությունում:

Սակայն այդպիսի վարձատրումը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայություններն իրականացվում են տվյալ Պետությունում և տվյալ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) տվյալ Պետության քաղաքացի է, կամ

ii) տվյալ Պետության ռեզիդենտ չի դարձել միայն այդպիսի ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Որևէ կենսաթոշակ՝ վճարված ֆիզիկական անձին՝ Պայմանավորվող պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանման, տեղական իշխանության մարմնի կողմից կամ նրանց ստեղծած ֆոնդերից, այդ Պետությանը, իշխանության մարմնին կամ ստորաբաժանմանը մատուցած ծառայությունների համար, կհարկվի միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը կհարկվի միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե այդ ֆիզիկական անձը տվյալ Պետության ռեզիդենտ է և քաղաքացին:

3. 16-րդ, 17-րդ և 19-րդ հոդվածների դրույթները կկիրառվեն այն ծառայությունների մատուցման վարձատրության և կենսաթոշակների նկատմամբ, որոնք կապված են Պայմանավորվող պետության, նրա վարչաքաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ:

Հոդված 21

Ուսանողներ և վերապատրաստվողներ

1. Պայմանավորվող պետությունում որպես ուսանող կամ վերապատրաստվող ժամանակավոր գտնվող, տեխնիկական, մասնագիտական կամ ձեռնարկատիրական բնագավառներում վերապատրաստվող մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտը չի հարկվում Պայմանավորվող պետությունում իր ապրուստի, ուսանելու կամ պրակտիկայի նպատակով արտասահմանից դրամական փոխադրում ստանալու համար:

2. Ուսանողին և վերապատրաստվողին վճարված վարձատրությունը, կախված հանգամանքներից, մյուս Պետությունում մատուցած ծառայության համար չի հարկվի այդ Պետությունում 4 տարի ժամանակահատվածի ընթացքում՝ պայմանով, որ այդպիսի ծառայությունները կապված լինեն ուսանելու, ապրուստի և պրակտիկայի հետ:

Հոդված 22 Դասախոսներ և հետազոտողներ

1. Ֆիզիկական անձի, ով հանդիսանում է կամ մինչև անմիջապես Պայմանավորվող պետություն գալը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որևէ համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ Պայմանավորվող պետության կառավարության արտոնագրած այլ նման շահույթի նպատակ չհետապնդող ուսումնական հաստատության հրավերով գտնվում է Պայմանավորվող այդ պետությունում, իր առաջին ժամանելու ամսաթվից 2 տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում, միայն ուսուցանելու, հետազոտելու կամ երկուսի միաժամանակ նպատակով, այդպիսի ուսումնական հաստատությունում ուսուցանելու կամ հետազոտելու համար ստացած վարձատրությունը այդ մյուս Պայմանավորվող պետությունում կազատվի հարկումից:

2. Սույն հոդվածի առաջին կետի դրույթները չեն կիրառվի հետազոտություններից եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունները չեն անցկացվում հասարակության շահերի, այլ առանձին անձի կամ անձանց մասնավոր օգուտի համար:

Հոդված 23 Այլ եկամուտներ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չքննարկված եկամուտների տեսակները, անկախ առաջացման վայրից, կհարկվեն միայն այդ Պետությունում:

2. Առաջին կետի դրույթները չեն կիրառվում այլ եկամուտների նկատմամբ, քան 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից եկամուտն է, եթե այդպիսի եկամուտներ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող պետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ մատուցում է այդ մյուս Պետությունում անկախ անհատական ծառայություններ այնտեղ գտնվող հաստատուն բազայից, և գույքը կամ իրավունքը, որի հետ կապված վճարվել է եկամուտը, իրոք կապված են այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են 7-րդ կամ 15-րդ հոդվածների դրույթները:

3. Անկախ առաջին և երկրորդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամուտի տեսակները նույնպես կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 24
Գույք

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի սեփականություն համարվող, մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ հոդվածում ներկայացված անշարժ գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող կամ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայություններ մատուցելու նպատակով տրամադրության տակ գտնվող հաստատուն բազային վերաբերող շարժական գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության սեփականություն համարվող գույքը, ներկայացված որպես միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային, օդային նավեր, ավտոմոբիլային, երկաթուղային փոխադրամիջոցներ կամ այդպիսի ծովային, գետային, օդային նավերի, ավտոմոբիլային, երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույք, կհարկվի միայն այդ Պետությունում:

4. Ընկերության ակտիվում որպես բաժնետոմսեր և այլ կորպորատիվ իրավունքներ ներկայացված գույքը, որը կազմված է գլխավորապես Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ Պայմանավորվող պետությունում:

5. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը կհարկվեն միայն այդ Պետությունում:

Հոդված 25
Կրկնակի հարկման բացառումը

1. Հայաստանում կրկնակի հարկումը կբացառվի հետևյալ կերպ.

ա) Եթե Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Ռումինիայում, ապա Հայաստանը թույլ կտա.

i) այդ ռեզիդենտի եկամտահարկից հանել Ռումինիայում վճարված եկամտահարկին հավասար գումար,

ii) այդ ռեզիդենտի գույքահարկից հանել Ռումինիայում վճարված գույքահարկին հավասար գումար:

Այդպիսի հանումը, սակայն, յուրաքանչյուր դեպքում չի գերազանցի մինչև հանումի տրամադրումը հաշվարկված եկամուտին կամ գույքին

վերաբերող, կախված հանգամանքներից, եկամտահարկի կամ գույքահարկի մասը, որը կարող է հարկվել Ռումինիայում:

բ) Եթե, սույն Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան՝ Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը ազատված է Հայաստանում հարկումից, ապա Հայաստանը, համեմայն դեպս, կարող է այդպիսի ռեզիդենտի գույքի կամ եկամուտի մնացած մասի վրա տարածվող հարկի գումարը հաշվարկելիս ուշադրություն դարձնել հարկումից ազատված եկամուտի կամ գույքի վրա:

2. Ռումինիայում կրկնակի հարկումը կբացառվի հետևյալ կերպ.

եթե Ռումինիայի ռեզիդենտը եկամուտ կամ 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներում որոշված եկամտի տեսակ, շահույթ, հավելաձ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Համաձայնագրի դրույթներին և Հայաստանի օրենսդրությանը համաձայն, կարող են հարկվել Հայաստանում, ապա Ռումինիան թույլ կտա հաշվանցել Հայաստանում վճարված եկամտի, եկամտի տեսակի, շահույթի, հավելաձի կամ գույքի հարկի հավասար գումարը:

Հաշվանցման գումարը, սակայն, չի գերազանցի այդ եկամուտի, եկամուտի տեսակի, շահույթի, հավելաձի կամ գույքի ռումինական հարկի գումարը՝ հաշվարկված Ռումինիայի հարկային օրենսդրության և կանոնակարգերի հետ համապատասխան:

Հոդված 26 Անխտրականություն

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք չպետք է ենթարկվեն մյուս Պայմանավորվող պետությունում որևէ հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, որն այլ է կամ ավելի է, քան հարկումն ու պարտավորությունների կատարումը, որին այդ մյուս Պետության ազգային անձինք ենթակա են կամ կարող են ենթակա լինել նման հանգամանքներում:

2. Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ համարվող քաղաքացիություն չունեցող անձինք չպետք է ենթարկվեն Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում որևէ հարկման կամ պարտավորության կատարման, որն այլ է կամ ավելի է, քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունների կատարումը, որին այդ մյուս Պետության ազգային անձինք ենթակա են կամ կարող են ենթակա լինել նման հանգամանքներում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը չի կարող պակաս բարենպաստ լինել այդ մյուս Պայմանավորվող պետությունում, քան այդ մյուս Պետությունում նույնատիպ գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը:

Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին շնորհելու, հարկման նպատակների համար, անհատական արտոնություններ, պահումներ և զեղչեր, որոնք այդ մյուս Պետությունը տրամադրում է սեփական ռեզիդենտներին նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 12-րդ և 13-րդ հոդվածների 6-րդ կետերի դրույթները, տոկոսները, կոմիսիոն վարձատրումները, ռոյալթին և Պայմանավորվող պետության ձեռնարկության` մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին կատարած այլ վճարումները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով, ենթակա են հանման նույն պայմաններով, ինչպես եթե դրանք կվճարվեին առաջին նշված Պետության ռեզիդենտին:

Նմանապես Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով պետք է հանման ենթակա լինի նույն պայմաններով, ինչպես եթե այն կպարտավորվեր առաջին նշված Պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքը ամբողջովին կամ մասամբ պատկանում կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է նշված առաջին Պետությունում ենթարկվեն որևէ հարկման կամ դրա հետ կապված ցանկացած պարտավորությունների կատարման, որն այլ է կամ ավելի ծանր է, քան հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարումը, որին ենթակա են կամ կարող են ենթակա լինել նշված առաջին Պետության այլ նման ձեռնարկությունները:

6. Սույն հոդվածում ոչինչ չի մեկնաբանվի որպես պարտավորեցնող Պայմանավորվող պետությանը շնորհել այդ Պետության ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձանց, հարկման նպատակով, որևէ անհատական արտոնություններ, պահումներ և զեղչեր, որոնք շնորհում է իր ռեզիդենտ ֆիզիկական անձանց:

7. Սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն սույն Համաձայնագրի տարածման ոլորտում գտնվող հարկերի նկատմամբ:

Հոդված 27

Փոխհամաձայնեցման ընթացակարգը

1. Եթե անձը համարում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները բերում են կամ կբերեն նրա` սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկմանը ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված

պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործը Պայմանավորվող այն պետության իրավասու մարմնի քննարկմանը, ում ռեզիդենտը հանդիսանում է, կամ եթե գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 26-րդ հոդվածի առաջին կետին, Պայմանավորվող այն պետության իրավասու մարմնին, ում ազգային անձն է հանդիսանում:

Դիմումը պետք է ներկայացվի Համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման բերող գործողության մասին առաջին հիշատակման պահից երկու տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմումը կհամարի հիմնավորված կամ եթե չկարողանա հանգել գոհացուցիչ որոշման, կձգտի լուծել հարցը մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառել սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկումը: Ցանկացած ձեռք բերված համաձայնություն պետք է կատարվի անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսվող ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կձգտեն լուծել բոլոր դժվարություններն ու հակասությունները, որոնք կարող են առաջանալ Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաև Համաձայնագրով չնախատեսված դեպքերում խորհրդակցել կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի ըմբռնման մեջ համաձայնության հասնելու նպատակով: Երբ համաձայնության գալու համար նպատակահարմար է կարծիքների բանավոր փոխանակումը, այդպիսի փոխանակումը կարող է կատարվել Պայմանավորվող պետության իրավասու մարմինների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի միջոցով:

Հոդված 28

Տեղեկությունների փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի կամ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության դրույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ կփոխանակեն Համաձայնագրում ընգրկված հարկերի վերաբերյալ այնքանով, որքանով, հարկումը չի հակասում Համաձայնագրին, հատկապես այդ հարկերի առնչությամբ խաբեությունը կամ խուսափումը կանխելու նպատակով: Տեղեկությունների փոխանակումը 1-ին հոդվածով չի սահմանափակվում: Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տեղեկությունը, և հանձնվում է միայն

այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղված են Համաձայնագրով ընդգրկվող հարկերը գնահատելով կամ գանձելով, հարկադիր բռնագանձումով կամ դատական հետապնդումով կամ բողոքարկումների քննմամբ: Ստացած տեղեկությունը այդ անձինք կամ մարմինները պետք է օգտագործեն միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել այդ տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատարանի որոշումներ ընդունելիս:

2. Առաջին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) անցկացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությունից կամ վարչական գործավարությունից տարբերվող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնել տեղեկություն, որը հնարավոր չէ ստանալ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրության կամ սովորական վարչական գործավարության ընթացքի համաձայն,

գ) ներկայացնել որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք, առևտրական գործընթաց բացահայտող կամ պետական քաղաքականությանը (հասարակարգին) հակասող տեղեկություն:

Հոդված 29

Աջակցություն գանձման գործում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները պարտավորվում են միմյանց օգնել և աջակցել սույն Համաձայնագրով նախատեսված հարկերի, ներառյալ այդպիսի հարկերին վերաբերող տոկոսների, ուշացած վճարումների համար տույժերի և տույժերի բնույթ չունեցող տուգանքների գանձման գործում:

2. Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հարցումները այդպիսի հարկերի գանձման գործում աջակցելու համար պետք է ընդգրկեն այնպիսի վկայականի հանձնումը, որի օժտած լիազորությունները, այդ Պետության օրենսդրության համաձայն, կհամարեն նշված հարկերը վերջնականապես որոշված: Սույն հոդվածի նպատակների համար հարկը համարվում է վերջնականապես որոշված, երբ Պայմանավորվող պետությունը իրավունք ունի սեփական ներքին օրենսդրության համաձայն գանձել հարկերը, իսկ հարկատուն չունի այդ գանձումը կասեցնելու հետագա իրավունք:

3. Պայմանավորվող պետության հարցումը՝ ընդունված կատարման մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից, կկատարվի այդ մյուս Պետության կողմից այնպես, ինչպես կկատարեր սեփական հարկերի վերաբերյալ հարցումը:

4. Սույն հոդվածի համաձայն Պայմանավորվող պետության իրավասու մարմնի գանձած գումարները պետք է փոխանցվեն մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնին: Սակայն եթե Պայմանավորվող պետության իրավասու մարմինները չեն համաձայնում այլ կերպ, ապա գանձման ժամանակ օգնության ապահովման սովորական ծախսերը կրում է առաջին Պետությունը:

5. Ըստ սույն հոդվածի պայմանների, եթե հարկերի գանձումը վերաբերում է մի ժամանակաշրջանի, որի ընթացքում հարկատուն հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա հարկերի գանձման գործում ոչ մի օգնություն չի ցուցաբերվի:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետություններից մեկում սեփական հարկերի գանձման ժամանակ օգտագործվող միջոցներից տարբեր վարչական միջոցների կիրառման կամ հասարակական քաղաքականությանը (հասարակարգին) հակասող պարտավորությունների հանձնարարական:

Հոդված 30

Դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայությունների անդամներ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայությունների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր նորմերի կամ հատուկ համաձայնագրերի հիման վրա տրամադրված ֆինանսական արտոնությունները:

Հոդված 31

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ կմտնի յուրաքանչյուր Պետության ներքին օրենսդրությամբ ուժի մեջ մտնելու համար հաստատված ընթացակարգի պահանջները կատարելու մասին երկու Կողմերի վերջին ծանուցման ամսաթվից 30 օր հետո: Համաձայնագիրը կկիրառվի.

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի նկատմամբ` Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացվող եկամուտներից,

ii) եկամուտներից և գույքից գանձվող այլ հարկերի նկատմամբ` Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո վճարված հարկերի համար:

Հոդված 32
Գործողության դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է անորոշ ժամանակով:

2. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է մյուս Պայմանավորվող պետությանը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցել Համաձայնագրի դադարեցման մասին ուժի մեջ մտնելու իր որոշումն ընդունելու պահից հինգ տարի անցնելուց հետո ցանկացած ժամանակ, օրացուցային տարվա մինչև հունիսի 30-ը ներառյալ:

Այդ դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը.

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի նկատմամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացվող եկամուտների նկատմամբ.

ii) եկամուտներից և գույքից գանձվող այլ հարկերի նկատմամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված հարկերի նկատմամբ:

Ի վկայություն որի՝ համապատասխան ձևով կառավարությունների կողմից լիազորված ներքոստորագրողները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում 1996 թվականի մարտի 25-ին երկու բնօրինակով, հայերեն, ռուսերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1997 թվականի օգոստոսի 25-ից:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» Համաձայնագրի ստորագրման պահին, կնքված Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև, համապատասխան ձևով կառավարությունների կողմից լիազորված ներքոստորագրողները համաձայնեցին հետևյալ դրույթների շուրջ, որոնք կկազմեն սույն Համաձայնագրի անբաժան մասը.

1. 5-րդ հոդվածի 6-րդ կետում.

«Անկախ կարգավիճակով գործակալ» արտահայտությունը Պայմանավորվող պետության ձեռնարկության առնչությամբ նշանակում է ֆիզիկական անձ, որը հանդիսանում է մյուս Պետության ռեզիդենտ և աշխատանքային հարաբերությունների մեջ չէ առաջինը նշված Պետության ձեռնարկության հետ:

Այդ գործունեությունից հնարավոր վնասների պատասխանատվությունը կամ ռիսկը ընկնում է այդ անձի և ոչ թե ձեռնարկության վրա:

2. 12-րդ հոդվածում.

Սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն Ռումինիայի համար:

3. 15-րդ հոդվածի 2-րդ կետում.

Սույն Համաձայնագրի նպատակների համար Հայաստանի Հանրապետության դեպքում սույն հոդվածի դրույթները տարածվում են անհատ ձեռներեցի ձեռնարկատիրական գործունեության վրա:

Կատարված է Երևան քաղաքում 1996 թվականի մարտի 25-ին երկու բնօրինակով, հայերեն, ռումիներեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը: